ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության արդարադատության ակադեմիայի՝
ի դեմս ռեկտոր պարոն Սերգեյ Առաքելյանի,

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության՝
ի դեմս գլխավոր դատախազ պարոն Արթուր Դավթյանի,

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի՝
ի դեմս նախագահ պարոն Հայկ Գրիգորյանի

ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու
իրավունքների գրասենյակի՝ ի դեմս
Տնօրենի առաջին տեղակալ տիկին Կատարզինա Գարդափխաձեի

միջև

«Ատելության շարժառիթով կատարված հանցագործություններ.
վերապատրաստում դատախազների համար»
ծրագրի մասին

Հայաստանի Հանրապետության արդարադատության ակադեմիան (այսուհետ՝ Ակադեմիա), Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը (այսուհետ՝ Գլխավոր դատախազություն), Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեն (այսուհետ՝ Քննչական կոմիտե) և Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությունը՝ իր

ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի միջոցով (այսուհետ՝ ԺՀՄԻԳ), այսուհետ՝ Կողմեր,

Նկատի ունենալով փոխադարձ հետաքրքրությունը և այն համոզմունքը, որ ատելության շարժառիթով կատարված հանցագործությունները՝մարդու իրավունքների խախտում, իրավունքի գերակայության և կայուն ժողովրդավարության սպառնալիք են,

Վերահաստատելով ստորև բերված փաստաթղթերի դրույթները՝

- ԵԱՀԿ քսանմեկերորդ դարում անվտանգության և կայունության սպառնալիքներին արձագանքելու մասին ռազմավարություն (2003թ.),

- Աթենքի ԵԱՀԿ նախարարական խորհրդի թիվ 9/09 որոշում ատելության հիմքով հանցագործությունների դեմ պայքարի մասին,

- Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիա (1965թ.),

Հաշվի առնելով, որ ԺՀՄԻԳ-ի «Ատելության շարժառիթով հանցագործություններ. վերապատրաստում դատախազների համար» ուսումնական ծրագիրը (այսուհետ՝ ԱՇՀՎԴ) մշակվել է ԵԱՀԿ մասնակից պետություններում ատելության շարժառիթով հանցագործությունների մասին դատախազների վերապատրաստում անցկացնելու նպատակով,

Համոզված լինելով, որ Ակադեմիայի, Գլխավոր դատախազության, Քննչական կոմիտեի և ԺՀՄԻԳ-ի միջև համագործակցությունը կարող է նպաստել ատելության շարժառիթով կատարված հանցագործությունների դեմ պայքարում փոխադարձ նպատակների ձեռքբերմանը,

Համաձայնել են հետևյալի մասին.

Ակադեմիան՝

1. Սույն Հուշագրի ստորագրումից հետո մեկ շաբաթվա ընթացքում նշանակում է ազգային համակարգող, որը հանդես է գալիս որպես ԺՀՄԻԳ-ի հետ աշխատանքի լիազոր ներկայացուցիչ, և Գլխավոր դատախազության և Քննչական կոմիտեի հետ միասին համակարգում է Հայաստանում ԱՇՀՎԴ-ի իրականացումը. համակարգողի տեխնիկական առաջադրանքը ներկայացված է սույն Հուշագրի Հավելված 1-ում:

2. Սույն Հուշագրի ուժի մեջ մտնելուց երկու շաբաթ անց համագործակցության առաջարկով կապ է հաստատում սույն Հուշագրի Հավելված 2-ում թվարկված շահագրգիռ կողմերի հետ և ստեղծում է Ծրագրի իրականացման ազգային աշխատանքային խումբ (այսուհետ՝

ԾԻԱԱԽ), որը խորհրդատվական աշխատանք է իրականացնելու ուսումնական ծրագրի և ուսումնական նյութերի ադապտացման ուղղությամբ՝ վերանայելով հայերեն թարգմանությունը, ապահովելով ԱՇՀՎԴ-ի արդյունավետ իրականացումը, նպաստելով մշտադիտարկման, գնահատման և հետագա այլ գործողություններին. ԾԻԱԱԽ-ի Տեխնիկական առաջադրանքը ներկայացված է սույն Հուշագրի Հավելված 2-ում:
ԾԻԱԱԽ առաջին հանդիպումը տեղի կունենա ԺՀՄԻԳ-ի կողմից ԱՇՀՎԴ-ի հարմարեցված ուսումնական ծրագրի տրամադրումից մեկ ամիս անց (տե՛ս ստորև):

3. ԾԻԱԱԽ-ի առաջին հանդիպումից մեկ ամիս անց, Գլխավոր դատախազության և Քննչական կոմիտեի հետ սերտ համագործակցությամբ, մշակում է Ծրագրի իրականացման ազգային պլանը՝ ուղղված ԱՇՀՎԴ-ի հետագա փուլերի ընթացքում վերապատրաստման անցկացմանը, այդ թվում՝

   ա. առնվազն տասը դատախազների և Քննչական կոմիտեի տասը քննիչների ընտրություն և ներգրավում՝ վերապատրաստողների վերապատրաստման դասընթացին մասնակցելու և ԱՇՀՎԴ-ի դասընթացն իրականացնելու նպատակով,

   բ. քաղաքացիական հասարակությունը, համալսարանական շրջանակները և դատական համակարգը ներկայացնող այլ հավանական մենթորների ընտրություն և ներգրավում՝ վերապատրաստողներ վերապատրաստելու և ԱՇՀՎԴ-ի դասընթացն իրականացնելու նպատակով,

   գ. ՀՀ դատախազության կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների դատախազների ընտրություն և ներգրավում՝ ԱՇՀՎԴ-ի հետագա կասկադային ուսուցման փուլում վերապատրաստելու նպատակով,

   դ. Քննչական կոմիտեի կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների քննիչների ընտրություն և ներգրավում՝ ԱՇՀՎԴ-ի հետագա կասկադային ուսուցման փուլում վերապատրաստելու նպատակով, և

   ե. ԱՇՀՎԴ-ի իրականացման համար ժամանակացույցի սահմանում:

   Խրախուսվում է ապագա վերապատրաստողների և վերապատրաստվողների շրջանում կանանց և տղամարդկանց հավասար համամասնությամբ ներկայացվածությունը:

4. Գլխավոր դատախազության և Քննչական կոմիտեի հետ սերտ համագործակցությամբ ապահովում է ԱՇՀՎԴ-ի հետագա շարունակականությունը՝ կասկադային սկզբունքով իրականացնելով ԱՇՀՎԴ դասընթացը վերապատրաստված վերապատրաստողների կողմից իրականացվող հետևյալ գործողությունների միջոցով՝

   ա. Ծառայության ընթացքում տարեկան առնվազն չորս ԱՇՀՎԴ վերապատրաստումների կազմակերպում և իրականացում՝ մեկուկես օր առկա ուսուցմամբ՝ առնվազն 10 դատախազներից և Քննչական կոմիտեի 10 քննիչներից

բաղկացած խմբերի համար,

բ. ԱՇՀՎԴ դասընթացի ինտեգրում՝ որպես դատախազների թեկնածուների և Քննչական կոմիտեի քննիչների թեկնածուների մասնագիտական պատրաստման, գործող դատախազների և քննիչների վերապատրաստման ուսուցման ծրագրերի մշտական բաղադրիչ,

գ. Դատախազության համակարգում ուսումնական միջոցառումների կազմակերպման նպատակով վերապատրաստողների խթանում,

դ. Քննարկում է դատավորների, դատավորների թեկնածուների, դատավորների թեկնածուների հավակնորդների, ինչպես նաև դատաիրավական ոլորտի այլ մասնագետների համար ԱՇՀՎԴ ծրագրով մասնագիտական պատրաստում և վերապատրաստում կազմակերպելու հարցը:

5. Ապահովում է ԱՇՀՎԴ-ի պլանավորումն ու իրականացումը, այդ թվում՝ ծրագրի իրականացման շրջանակներում վերապատրաստողների համար լոգիստիկ և ենթակառուցվածքային աջակցության տրամադրման միջոցով, ինչպես նաև ԱՇՀՎԴ փոխանցումը դատախազներին:

6. Հրավիրում է ԺՀՄԻԳ-ին՝ ունկնդրելու վերապատրաստման դասընթացը և աջակցելու ծրագրի գնահատմանը,

7. Ապահովում է ԱՇՀՎԴ-ի իրականացման համար վերապատրաստումների անցկացման վայրերի, ուսուցման համար անհրաժեշտ սարքավորումների և մասնակիցների այլ կարիքներին վերաբերող ծախսերի վճարումը:

Գլխավոր դատախազությունը՝

1. Սույն Հուշագրի ստորագրումից մեկ շաբաթ անց նշանակում է Համակարգման պատասխանատու, որը հանդես է գալիս որպես լիազոր ներկայացուցիչ՝ Ակադեմիայի, Քննչական կոմիտեի և ԺՀՄԻԳ-ի հետ Հայաստանի Հանրապետությունում ԱՇՀՎԴ-ի իրականացմանն ուղղված աշխատանքում և մասնակցում է ԾԻԱԱԽ-ի աշխատանքներին:

2. Աջակցում է ԱՇՀՎԴ-ի արդյունավետ և շարունակական իրականացմանը՝ Ծրագրի իրականացման ազգային պլանում ընտրված այն գործող դատախազների նշանակման միջոցով, որոնք կմասնակցեն Ակադեմիայի կողմից կազմակերպված ԱՇՀՎԴ-ի վերապատրաստման դասընթացներին:

3. Սատարում է Ակադեմիային՝ վերը նշված հանձնառությունների կատարմանն ուղղված ջանքերում, ըստ անհրաժեշտության:

4. Դիտարկում է ԺՀՄԻԳ-ի աջակցությամբ ատելության շարժառիթով կատարված հանցագործությունների արդյունավետ քննության վերաբերյալ դատախազների համար նախատեսված Ուղեցույցի մշակման հնարավորությունը:

Քննչական կոմիտեն՝

1. Սույն Հուշագրի ստորագրումից հետո մեկ շաբաթվա ընթացքում նշանակում է համակարգող՝ որպես Ակադեմիայի, Գլխավոր դատախազության և ԺՀՄԻԳ-ի հետ աշխատանքի լիազոր ներկայացուցիչ Հայաստանի Հանրապետությունում ԱՇՀՎԴ-ի իրականացման և ԾԻԱԱԽ-ի աշխատանքներին մասնակցելու համար:

2. Աջակցում է ԱՇՀՎԴ-ի արդյունավետ և կայուն իրականացմանը Ծրագրի իրականացման ազգային պլանով սահմանված Քննչական կոմիտեի այն քննիչների նշանակման միջոցով, որոնք մասնակցելու են Ակադեմիայի կողմից կազմակերպված ԱՇՀՎԴ-ի վերապատրաստման դասընթացներին:

3. Սատարում է Ակադեմիային՝ վերը նշված հանձնառությունների կատարմանն ուղղված ջանքերում, ըստ վերաբերելիության:

4. Դիտարկում է ԺՀՄԻԳ-ի աջակցությամբ ատելության շարժառիթով կատարված հանցագործությունների արդյունավետ քննության վերաբերյալ քննիչների համար նախատեսված Ուղեցույցի մշակման հնարավորությունը:

ԺՀՄԻԳ-ը՝

1. Սույն Հուշագրի ստորագրումից հետո մեկ շաբաթվա ընթացքում նշանակում է համակարգման պատասխանատու՝ որպես ԱՇՀՎԴ ծրագրի իրականացման ընթացքում Ակադեմիայի, Գլխավոր դատախազության և Քննչական կոմիտեի հետ աշխատանքում իր լիազոր ներկայացուցիչ:

2. Սույն Փոխըմբռնման հուշագրի ստորագրումից հետո երկամսյա ժամկետում իրականացնում է կարիքների գնահատում՝ հիմք դնելու Հայաստանում ԱՇՀՎԴ-ի

ադապտացված ուսումնական ծրագրի նախագծմանը:

3. Կարիքների գնահատման առաքելությունից հետո եռամսյա ժամանակահատվածում մշակում է ուսումնական ծրագրի նախագիծը, տրամադրում է դրա հայերեն թարգմանությունը և խորհրդակցում է ԾԻԱԱԽ-ի հետ՝ այն համապատասխանաբար ադապտացնելու նպատակով:

4. Ակադեմիային տրամադրում է ԱՇՀՎԴ-ի ուսումնական ծրագրի ու նյութերի անհրաժեշտ քանակի պատճենները, այդ թվում՝ ապահովելով դրանց հայերեն թարգմանությունը:

5. Ընտրված դատախազների և քննիչների համար վերապատրաստողների դասընթացի շրջանակներում իրականացնում է համակողմանի ուսուցում:

6. Կատարում է ծրագրի իրականացմանը հաջորդող գնահատում և աջակցություն է տրամադրում Ակադեմիային ծրագրի իրականացման հետագա փուլերում:

7. Աջակցություն է տրամադրում Քննչական Կոմիտեին և Գլխավոր դատախազությանը դատախազների և Քննչական կոմիտեի քննիչների համար ատելության շարժառիթով կատարված հանցագործությունների արդյունավետ քննության և հետապնդման մասին ուղեցույցի մշակման ընթացքում:

8. Հոգում է կարիքների գնահատման առաքելության, ԱՇՀՎԴ ուսումնական ծրագրի պատրաստման և թարգմանության ծախսերը, և վերապատրաստողների վերապատրաստման ծրագրերի իրականացմանը, վերապատրաստողների և ԺՀՄԻԳ-ի օժանդակ աշխատակազմի վճարումների և ճանապարհածախսի, բանավոր թարգմանության ծառայությունների և թարգմանիչների վարձատրությանը վերաբերող ծախսերը: ԺՀՄԻԳ-ը նաև հոգում է ԱՇՀՎԴ ծրագրի կատարողականի գնահատման ծախսերը:

Սույն Հուշագիրը վավերական է մինչև այն պահը, երբ Կողմերն այլ որոշում չեն կայացրել, պայմանով, որ այսպիսի որոշման մասին մյուս Կողմերը պատշաճ իրազեկվեն:

Ստորագրված փաստաթղթի հայերեն և անգլերեն բնագիր երկու տեքստերն էլ վավերական են, կազմված են չորս օրինակից, որոնցից մեկական օրինակ տրվում է Կողմերից յուրաքանչյուրին: Սույն Փոխըմբռնման հուշագրի մեկնաբանման ընթացքում առաջացած հակասությունների դեպքում գերակայում է անգլերեն տեքստը:

Կողմերից որևէ մեկը չպետք է պատասխանատվության ենթարկվի սույն Հուշագրում ներառված գործողությունների չկատարման կամ կետանցման համար այն դեպքերում և ժամանակահատվածում, երբ այդպիսի չկատարումը կամ կետանցումը տվյալ կողմի ողջամիտ հսկողությունից դուրս ընկած պատճառներով է, այդ թվում՝ պայմանավորված է համաճարակային, համավարակային, մեկուսացման, կարանտինային իրավիճակով կամ

ռազմական դրության հանգամանքով, էականորեն ազդում է սույն Հուշագրի ներքո իր պարտավորությունների կատարման վրա, և անհնար է այն ողջամտորեն կանխատեսել կամ դրա դեմ միջոցներ ձեռնարկել:

Արդարադատության ակադեմիա

Սերգեյ Առաքելյան

Ռեկտոր

Երևան, *ամսաթիվ*
26/04/2021

Գլխավոր դատախազություն

Արթուր Դավթյան

Գլխավոր դատախազ

Երևան, *ամսաթիվ*
10.05.21 թ.

Քննչական կոմիտե

Հայկ Գրգորյան

Նախագահ

Երևան, *ամսաթիվ* 07.05.21 թ.

ԺՀՄԻԳ

Կատարզինա Գարդափխաձե

Տնօրենի առաջին տեղակալ

Վարշավա, *ամսաթիվ*
2021 -05- 25

ՀԱՎԵԼՎԱԾ 1. Ազգային համակարգողի տեխնիկական առաջադրանքը

Համակարգողի գործառույթները՝

ԱՀ-ն ԱՇՀՎԴ -ի պլանավորման և գործառնությունների հիմնական կոնտակտային անձն է:

ԱՀ-ի հիմնական առաջադրանքն է՝

- համակարգել ԺՀՄԻԳ-ի, Գլխավոր դատախազության և Քննչական կոմիտեի համապատասխան համակարգողների հետ ԱՇՀՎԴ-ի իրականացումը,
- համակարգել կարիքների գնահատման առաքելության օրակարգը ԺՀՄԻԳ-ի վերապատրաստման թիմի հետ, որի շրջանակներում կարող են ներառվել ոստիկանության և դատախազության, դատաիրավական համակարգի այլ ներկայացուցիչների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հանդիպումները,
- հրավիրել և նախագահել ԾԻԱԱԽ-ի հանդիպումները և համակարգել դրա գործողությունները,
- համակարգել ԱՇՀՎԴ-ի վերապատրաստողների վերապատրաստման ծրագիրը՝ ապահովելով մասնակիցների ընտրության չափանիշներին համապատասխանությունը և աջակցել վերապատրաստմանը վերաբերող լոգիստիկ հարցերի կազմակերպմանը,
- մեկնաբանություններ անել և ներդրում ունենալ նյութերի ադապտացման գործում,
- ԺՀՄԻԳ-ին տրամադրել տեղեկություններ վերապատրաստման հանդիպումների քանակի և ձեռնարկված վերապատրաստումների տեսակների, ինչպես նաև վերապատրաստումն անցած վերապատրաստողների թվի և պաշտոնների մասին:

Որակավորումներ՝

- Վարչական և մասնագիտական փորձ,
- Մասնագիտական թեմաներով անգլերենով հաղորդակցվելու կարողություն,
- Ատելության շարժառիթով հանցագործություններին վերաբերող հարցերի վերաբերյալ փորձառություն:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. Ծրագրի իրականացման ազգային աշխատանքային խմբի տեխնիկական առաջադրանք

ԾԻԱԱԽ-ի դերն էական է ԱՇՀՎԴ-ի իրականացման և մասնակից Պետության և ԺՀՄԻԳ-ի միջև կապի ապահովման համար: ԾԻԱԱԽ-ի կազմը և դրա գործառույթները շարադրված են ստորև: Նախատեսվում է ԾԻԱԱԽ-ի կանոնավոր հանդիպումների կազմակերպում՝ քննարկելու արձանագրված առաջընթացը: ԾԻԱԱԽ-ի նիստերը գումարում և նախագահում է Ազգային համակարգողը: Խրախուսվում է տղամարդկանց և կանանց համաչափ ներկայացվածությունը:

<u>Առաջարկվում է կապ հաստատել հետևյալ հաստատությունների և կազմակերպությունների հետ՝</u>

- Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազություն,
- Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտե,
- Հայաստանի Հանրապետության ոստիկանություն,
- Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայություն,
- Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն,
- Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ,
- Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան,
- Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարան,
- Հայաստանի Հանրապետության վերաքննիչ դատարանների/առաջին ատյանի դատարանների ներկայացուցիչներ,
- Համալսարանական շրջանակների ներկայացուցիչներ,
- Ատելության շարժառիթով հանցագործությունների ոլորտում փորձագիտական կարողություններ ունեցող քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ,
- ԺՀՄԻԳ:

Ծրագրի իրականացման ազգային աշխատանքային խումբը կարող է հանդիպումներին հրավիրել վերապատրաստող և համալսարանական այլ հաստատությունների ներկայացուցիչների և այլ կարևոր շահագրգիռ կողմերի:

<u>Ծրագրի իրականացման ազգային աշխատանքային խմբի հատուկ գործառույթներն են՝</u>

- Առաջարկել ԱՇՀՎԴ-ի ուսումնական ծրագրի ադապտացիան, ըստ անհրաժեշտության և երկրում առկա իրադրության,

- ԺՀՄԻԳ-ի աջակցությամբ ապահովել ԱՇՀՎԴ-ի թարգմանված նյութերի ստուգումը,
- ԺՀՄԻԳ-ի աջակցությամբ որոշել վերապատրաստողների վերապատրաստման դասընթացին մասնակցության ընտրության չափանիշները,
- ԺՀՄԻԳ-ի հետ միասին մշակել լրացուցիչ նյութեր՝ ատելության շարժառիթով հանցագործության հասկացության մասին տեղեկություններ տարածելու համար,
- Առաջարկություններ անել ԱՇՀՎԴ-ի իրականացման և արդյունքների ապահովման մասին,
- Մշտադիտարկել ԱՇՀՎԴ -ի իրականացման առաջընթացը,
- Ներգրավվել գնահատման գործընթացում՝ աջակցելով գնահատողներին, տրամադրելով տվյալներ և ԱՇՀՎԴ-ի իրականացման մասին տեղեկություններ,
- Սատարել ԱՇՀՎԴ-ի շարունակականությանը՝ դատախազների, դատավորների և Քննչական կոմիտեի քննիչների ուսուցման և կրթական հաստատությունների ուսումնական ծրագրերում ներառմամբ,
- ԺՀՄԻԳ-ի հետ միասին մշակել անցկացված ԱՇՀՎԴ դասընթացների թվի, մասնակցների թվի և պաշտոնների գրանցման համակարգ,
- ԱՇՀՎԴ-ի իրականացմանը վերաբերող այլ գործառույթներ: